ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
2026 թ. մարտի 12-ի թիվ 7 նիստի

Գիտական խորհրդի նիստը սկսելուց առաջ նախագահող Ն. Մարտիրոսյանը առաջարկեց հաստատել օրակարգը: Բաց քվեարկությամբ ներկաները միաձայն կողմ քվեարկեցին:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>-«Լրագրություն» կրթական ծրագրի բարեփոխման ընթացքի և արդյունքների մասին Ա Մենեմշյանի հաղորդումը:

Ա. Մենեմշյանը ներկայացրեց ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի «Լրագրություն» բակալավրի կրթական ծրագրի բարելավման ընթացքը և հիմնական արդյունքները, որոնք իրականացվել են 2025 թ. հոկտեմբերից մինչև 2026 թ. փետրվար: Զեկույցում ներկայացվեց ծրագրի վերափոխման ամբողջ գործընթացը՝ սկսած նախնական վերլուծական փուլից մինչև իրականացված բովանդակային փոփոխությունները:

Նշվեց, որ բարելավման առաջին փուլում կատարվել է ծրագրի միջազգային համադրական վերլուծություն (benchmarking)՝ հիմնված Շանհայի վարկանիշավորման աղյուսակի՝ Հաղորդակցություն (Journalism, Media & Communication) մասնագիտության ուղղությամբ: Վերլուծությունն իրականացվել է վարկանիշային աղյուսակում ընդգրկված լավագույն 30 համալսարանների շրջանակում: Այս աշխատանքի նպատակն էր գնահատել ԵՊՀ «Լրագրություն» կրթական ծրագրի դիրքը միջազգային կրթական միջավայրում և բացահայտել դրա բովանդակային ու կառուցվածքային համապատասխանություններն ու անհամապատասխանությունները առաջատար համալսարանների ծրագրերին: Այդ նպատակով ուսումնասիրվել են նշված համալսարանների համապատասխան կրթական ծրագրերը, քարտեզագրվել են ԵՊՀ ծրագրի 17 մասնագիտական դասընթացներին համապատասխան միջազգային դասընթացները, հավաքագրվել և վերլուծվել են դրանց ուսումնական պլանները: Այս աշխատանքի հիման վրա իրականացվել է նաև անհամապատասխանությունների վերլուծություն (Gap Analysis), որը հնարավորություն է տվել բացահայտելու ծրագրի ուժեղ կողմերը, առկա բացերը և զարգացման առաջնահերթ ուղղությունները:

Երկրորդ փուլում իրականացվել է ծրագրի բովանդակային խորքային վերանայում՝ նպատակ ունենալով ապահովել կրթական ծրագրի արդիականացումը, դրա համապատասխանությունը միջազգային չափանիշներին և ուսանողների մասնագիտական հմտությունների համակարգային զարգացումը: Աշխատանքային խումբը համագործակցել է համապատասխան դասընթացների դասախոսների հետ՝ վերանայելով մասնագիտական բաղադրիչի բոլոր 17 պարտադիր դասընթացների նպատակները, ուսուցման վերջնարդյունքները, բովանդակությունը, դասավանդման մեթոդները, գնահատման համակարգերը և օգտագործվող գրականությունը: Արդյունքում մի շարք դասընթացներ հիմնովին վերափոխվել են, մի քանիսը մշակվել են հիմնովին, իսկ որոշ դասընթացներ վերաիմաստավորվել և հարստացել են ավելի արդիական բովանդակությամբ:

Զեկույցում ընդգծվեց, որ ծրագրի վերափոխման ընթացքում մեծ ուշադրություն է դարձվել լրագրության ոլորտում ժամանակակից միտումների արտացոլմանը՝ հատկապես թվային լրագրության, տվյալահեն մեթոդների, սոցիալական մեդիայի և արհեստական բանականության կիրառման ուղղությամբ: Միաժամանակ ուժեղացվել են newsroom-based և practice-based ուսուցման մոտեցումները, ինչպես նաև ընդգծվել է սոցիալական պատասխանատվության և քննադատական մտածողության զարգացման կարևորությունը:

Արդյունքում ձևավորվել է ավելի համակարգված և փոխկապակցված կրթական ծրագիր, որտեղ դասընթացները կառուցված են ուսանողների մասնագիտական հմտությունների աստիճանական զարգացման տրամաբանությամբ և մեծ ուշադրություն է դարձվում գործնական ուսուցմանը, մեդիաարտադրական միջավայրում աշխատելու կարողություններին և ժամանակակից մեդիաոլորտի պահանջներին համապատասխան մասնագիտական պատրաստվածությանը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- Ն. Մարտիրոսյան, *Դ. Պետրոսյան, Վ. Պետրոսյան, Ք. Ալազուլյան, Ն. Վարդանյան:*

Նախագահողի առաջարկով անցկացվեց բաց քվեարկություն: Գիտխորհրդին ներկա բոլոր անդամները «կողմ» քվեարկեցին:

<u>ՈՐՈՇԵՑԻՆ.</u>- Հաշվի առնելով քվեարկության արդյունքները

ա) Հաղորդումն ընդունել ի գիտություն:

բ) Հաստատել 2026-30 թթ. ուստարվա ուսումնական պլանը ըստ «Լրագրություն» կրթական ծրագրի բարեփոխված տարբերակի:

<u>ԼՍԵՑԻՆ.</u>- Մագիստրոսի կրթական նոր ծրագրի հայտը երաշխավորելու հարցը:

Գիտական խորհրդին ներկայացվեց Ժուռնալիստիկայի և Տնտեսագիտության ու կառավարման ֆակուլտետների համատեղ մշակած «Մեդիակառավարում և հաղորդակցություն» մագիստրոսի նոր կրթական ծրագիրը: Յ. Յանիկյանը տեղեկացրեց, որ հայտը ամբողջությամբ պատրաստ է, այն քննարկվել և բարելավվել է ԵՊՀ որակի ապահովման կենտրոնի հետ միասին: Ծրագրում դասավանդելու են ոլորտի առաջատար մասնագետները, և արդեն պայմանավորվածություններ կան մի շարք լրատվամիջոցների հետ պրակտիկայի անցկացման հետ կապված:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- Ն. Մարտիրոսյան, Դ. Պետրոսյան, Մ. Մխիթարյան, Ն. Վարդանյան, Ա. Մենեմշյան:

Գիտխորհուրդը բաց քվեարկությամբ հավանություն տվեց ներկայացվող կրթական ծրագրին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հավանություն տալ «Մեդիակառավարում և հաղորդակցություն» մագիստրոսի կրթական ծրագրին և ներկայացնել ռեկտորատ՝ համապատասխան գործընթաց կազմակերպելու համար:

ԼՍԵՑԻՆ.- ԻՆՆՈՄԵԴԻԱ (INNOMEDIA) փորձարարական ուսումնական հ/ը աշխատանքների մասին Գ. Աբրահամյանի հաղորդումը:

Գ. Աբրահամյանը նախ ներկայացրեց ընթացիկ ուսումնական տարվա ընթացքում InnoMedia ուսումնական, փորձարարական առցանց հեռուստատեսությունը համակարգային հենքի վրա կայացնելու ուղղությամբ իրականացված գործողությունների հիմնական արդյունքները, արձանագրվող միտումները և խնդիրները: Նա կարևորեց InnoMedia.am և Journalist.am հարթակների շրջանակներում ուսանողներին աաջադրվող ուսումնապրակտիկ պահանջները և դրանց կատարողականները «Ժուռնալիստի վարպետություն» և «Պրակտիկում» առարկայական ծրագրերին ավելի ինտեգրելու անհրաժեշտությունը և դրանով արտադրողականության մակարդակի ավելացումը: Ֆակուլտետի ստուդիական և տեխնիկական ռեսուրսներն ավելի արդյունավետ կիրառելու, նշված երկու հարթակներիով թողարկվող արտադրանքի տարածման, այդ հարթակների ներհամալսարանական և արտաքին ճանաչելիության բարձրացման սոցցանցային գործիքակազմն ավելի հետևողականորեն կիրառելու անհրաժեշտությունը:

Առաջարկվեց InnoMedia TV-ի և Journalist.am-ի շրջանակներում ուսանողների կատարած աշխատանքի արժեքը էականորեն բարձրացնել «Ժուռնալիստի վարպետություն» և «Պրակտիկում» առարկաների գնահատման համակարգում՝ հիմք ընդունելով նշված առարկայական ծրագրերում կատարված՝ գնահատման ենթաբաղադրիչի վերջին փոփոխությունները:

Առաջարկվեց նաև ուսումնական տարվա ավարտին հրավիրել աշխատաժողով՝ նվիրված նշված երկու հարթակների գործունեությանը և դրանց արդյունավետության բարձրացմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն և «Ժուռնալիստի վարպետություն» և «Պրակտիկում» առարկաների գնահատման համակարգում նախատեսվող փոփոխությունների առաջարկներ մշակել:

ԼՍԵՑԻՆ.- Ժուռնալիստիկայի պատմության, տեսության և պրակտիկայի ամբիոնի վարիչ Դ. Պետրոսյանի հաղորդումը ֆակուլտետի դասախոսների գիտական հոդվածների հրատարակության հարցի վերաբերյալ:

Դ. Պետրոսյանը տեղեկացրեց, որ միայն այս ուսումնական տարվա ընթացքում ֆակուլտետի դասախոսներն արդեն հրատարակել են 8 սկոպուսային հոդված /Դ. Պետրոսյան, Տ. Միմյան, Ն. Մարտիրոսյան, Ա. Մենեմշյան, Գ. Աբրահամյան, Տ. Դանիելյան/, ինչը նկատելի առաջընթաց է և վկայում է պրոֆեսորադասախոսական կազմի ներուժի մասին: Կիսամյակի վերջում այդ թիվը կարող է ավելանալ: Դ. Պետրոսյանն առաջարկեց մարտ-ապրիլ ամիսներին կազմակերպել գիտական սեմինարներ, քննարկելու ֆակուլտետում կատարված գիտական աշխատանքների արդյունքները և նախապատրաստվելու մայիսի վերջին կազմակերպվելիք ԵՊՀ ամենամյա հաշվետու գիտաժողովին: Աշխատանքների համակարգման համար առաջարկվեց Գոռ Աբրահամյանի թեկնածությունը:

<u>ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.</u>- *Ն. Մարտիրոսյան, Ա. Մենեմշյան, Զ. Մարգսյան, Ն. Վարդանյան, Մ. Կարապետյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ. – Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ՆԻՍՏԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ